Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն)

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ <<ՇՀԱՊՁԲ-15/11-1-2017 (ԵՊԲՀ)>>

Պատվիրատուն՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, որը գտնվում է **ք. Երևան, Կորյունի 2** հասցեում, ստորև ներկայացնում է **<<ՇՀԱՊՁԲ-15/11-1-2017 (ԵՊԲՀ)>>** ծածկագրով հայտարարված շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի վերաբերյալ ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ պարզաբանումները:

Հարցադրում: <<Արդյոք տեխնիկական բնութագրիչների տարբերությունները Ձեր կողմից կդիտարկվի համարժեք թե ոչ, մասնավորապես՝

● Հրավերով սահմանված 3700-4500 կելվին գունային աստիճանի փոխարեն առաջարկվի 5000 կելվին գունային աստիճանով լամպ, կամ 4500-5500 կելվին գունային աստիճանի փոխարեն առաջարկվի 6500 կելվին գունային աստիճանով լուսարձակ.

● Հրավերով սահմանված լուսային հոսքի նվազագույն պահանջով սահմանված լյումենների քանակը լինի ավելի քիչ (հաշվի առնելով մեր կազմակերպության փորձը և ներկայումս լուսադիոդային լամպեր արտադրող կազմակերպությունների կողմից նշված լուսային հոսքի միջին ցուցանիշները՝ լամպերի արտադրողականությունը հիմնականում լինում է 80-90լյումեն/1վատտ, իսկ Ձեր կողմից ներկայացված բնութագրերում այն կազմում է շուրջ 100 լյումեն/1վատտ, որն ըստ մեր կարծիքի բավականին խիստ է և սահմանափակում է մրցունակությունը)>>:

Հարցադրման ստացման ամսաթիվ: 14.02.2017թ.

Պարզաբանում: Համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի <<Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը>>: Միևնույն ժամանակ համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-ին մասի <<Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի <<կամ համարժեք>> բառերը>>:

Հիմք ընդունելով վերոգրյալը հայտնում ենք, որ <<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամի կողմից հայտարարված <<ՇՀԱՊՁԲ-15/11-1-2017 (ԵՊԲՀ)>> ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված ձեռք բերվող ապրանքների տեխնիկական բնութագրերը կազմված են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներին, ինչը հավասար պայմաններ է ապահովում հնարավոր բոլոր մասնակիցների համար և օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Հրավերով սահմանված կարգով ներկայացրած ապրանքների <<համարժեք>> կամ <<ոչ համարժեք>> չափանիշը գնահատվում է այն ժամանակ, երբ գնահատող հանձնաժողովի որոշմամբ Մասնակիցը ճանաչվում է առաջին տեղ զբաղեցրած և սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է իր կողմից հայտով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագիրը (բնութագրերը):

Սույն հատարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Պ. Գաբրելյանին:**

Հեռախոս՝ **060-621-249:**

Էլ. փոստ՝ **marketing.ysmu10@gmail.com:**

Պատվիրատու՝ **<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ**

<<14>> փետրվար 2017թ.